ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 181 – Ա **13 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 183 – Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 11-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողով ստեղծելու և ներմարզային երթուղիների չվացուցակները հաստատելու մասին» N 183 – Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ստեղծել ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, /հանձնաժողովի նախագահ/
Մանուկյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի խորհրդական
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Բաղդասարյան Կարեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
Գևորգյան Լևոն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության

տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի
մասնագետ

Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ներկայացուցիչներին /համաձայնությամբ/:»:

13.05.22020

ԳԵՎ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ